Լրացուցիչ համաձայնագիր թիվ 3

27.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-87-01-23
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան 03 **.08.2023թ.**

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Գևորգ Չամյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 10.04.2023թ.-ի թիվ 979-Ա հրամանով, և Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Հրայր Մանուկյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 27.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-87-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 26 126 400 (քսանվեց միլիոն մեկ հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 33 226 400 (երեսուներեք միլիոն երկու հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 27.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-87-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝	**Պատվիրատու՝**
«Հայփոստ» ՓԲԸ	Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ԸԻԴ
ք.Երևան, 0002, Սարյան 22	ք. Գավառ, Սայադյան 18
ՀՎՀՀ՝ 02507464	ՀՎՀՀ՝ 02583241
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 1930003703156000	ՀՀ՝ 900171001341
Հեռ.՝ (010) 514-548	Հեռ.՝ (0264) 2-40-60
Կոմերցիոն տնօրեն՝	Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝
Գևորգ Չամյան----------	Հրայր Մանուկյան ----------
/ստորագրություն/	/ստորագրություն/